ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«03» հոկտեմբեր 2022թ. ՆՄՈ/357-2022

ք. Արմավիր

«ՄԵԾԱՄՈՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ, ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՄԱՐՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ, ՆՎԱԶԵՑՆԵԼՈՒ ԵՎ «ՄԵԾԱՄՈՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածով, 36-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետով, 4-րդ և 5-րդ մասերով, 67-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 7-րդ կետերով, 68-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետով, 6-րդ մասով և ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի մայիսի 13-ի N690-Ա որոշման 2-րդ և 3-րդ կետերի պահանջների.

որոշում եմ՝

1. «Մեծամորի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը, բաժնետոմսերի մարման միջոցով, նվազեցնել

75725766 (յոթանասունհինգ միլիոն յոթ հարյուր քսանհինգ հազար յոթ հարյուր վաթսունվեց) Հայաստանի Հանրապետության դրամով:

2. Հաստատել «Մեծամորի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը՝ կանոնադրական կապիտալը՝ 103940000 (մեկ հարյուր երեք միլիոն ինը հարյուր քառասուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսերի քանակը՝ 20788 (քսան հազար յոթ հարյուր ութսունութ), մեկ բաժնետոմսի անվանական արժեքը՝ 5000 (հինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Հանձնարարել «Մեծամորի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենին (Մ. Վանյան)՝ ընկերության կանոնադրության փոփոխությունը սահմանված կարգով և ժամկետում գրանցել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Недействительная подпись Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

VERIFIED OCSP 03.06.2022 17:53:29 GMT+4

Подписано: HOVHANNISYAN EDVARD 2001830505